Արձանագրություն հ.5

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
29.09.22 թ. կայացած նիստի
Նիստին ներկա էին գիտական խորհրդի 38 անդամներից 28-ը:

Օրակարգում՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
2. Դոցենտի կոչման երաշխավորություն:
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ուսուցմամբ ասպիրանտների գիտական ղեկավարների և ատենախոսությունների թեմաների ամբիոններում կայացած որոշումները:

Որոշ ճշգրտումներից հետո գիտխորհրդի նիստը հատատեց ամբիոնների որոշումները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Հ.Մնացականյանը, նա ներկայացրեց դոցենտի կոչում ստանալու համար դիմած Էլյանորա Նորայրի Մաթևոսյանի և Գրիգոր Մանվելի Մնացականյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են դոցենտի կոչում հավակնելու համար ներկայացվող պահանջներին և առաջարկեց նրանց թուլ տալ մասնակցելու գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ասլանյան Գագիկ Սերգեյի /նախագահ/, Զուրաբյան Կարինե Անուշավանի և Բարխուդարյան Գոհար Արայի:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գ.Ասլանյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 38 անդամներից նիստին ներկա գտնվող 28-ը, քվեատուփում առկա է եղել 28 քվեաթերթ:

Է.Մաթևոսյանի օգտին քվեարկել են 26-ը, դեմ և եղել 2-ը:

Գ.Մնացականյանի օգտին քվեարկել են 28-ը,

Որոշեցին Է>Մաթևոսյանին և Գ. Մնացականյանին երաշխավորել ստանալու ՀՀ ԲՈԿ –ի կողմից շնորհվող դոցենտի գիտական կոչում;

Ընթացիկ հարցերի շրջանակում երաշխավորեցին հրատարակման Վ. Գաբրիելյանի <<Անշարժ գույքի էկոնոմիկա>> աշխատությունը որպես ուսումնա-մեթոդական ձեռնարկ:

Ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին, մեկ օրինակն էլ պահվում է ֆակուլտետի թղթապանակներում:

Գիտխորհրդի նախագահ Հ.Լ.Սարգսյան
տ,գ,դ., պրոֆեսոր

Գիտխորհրդի քարտուղար Ա.Հ.Համբարձումյան
տ.գ.թ., պրոֆեսոր